**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**

**ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/125 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **20 օգոստոսի 2024թ.**

2024թ-ի օգոստոսի 2-ից օգոստոսի 20-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի ունեցավ Ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/125 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Է. Ադումյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ավտոպարկի վարիչ, |
| Վ. Մելքոնյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Բալահովիտ ՈՒՓՏ մ/ճ-ի տնօրենի պ/կ, |
| Կ. Կարապետյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ավտոպարկի վարորդ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Է. Ադումյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:

5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2024թ-ի օգոստոսի 2-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին (ՀՀ դրամ) | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Արգելակման կոճղակ առջևի (Տոյոտա Պռադո) | 14166.67 | 05.08.2024 10:00 | 17000 |
| 2 | Արգելակման կոճղակ առջևի (Ռենո լոգան) | 10000 | 05.08.2024 10:00 | 12000 |
| 3 | Տրակտորի հետևի անվադողեր | 250000 | 05.08.2024 10:00 | 250000 |
| 4 | Անվադողեր 9.00 | - | Չկայացած | 160000 |
| 5 | ՄՏԶ-82 տրակտորի դինամո | - | Չկայացած | 23000 |
| 6 | ՄՏԶ-82 հիդրո խողովակ | 8000 | 05.08.2024 10:00 | 8000 |
| 7 | Շարժիչի կիսասինթետիկ յուղ10w40 | 36650 | 05.08.2024 10:00 | 44000 |
| 8 | Շարժիչի յուղ 5w30 | 73200 | 05.08.2024 10:00 | 88000 |

ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/125 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացած տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

2. Ընթացակարգը 4-5-րդ չափաբաժիններ մասով հայտարարել չկայացած, հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/125 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե; հեռ. | Էլ. Փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | Լոգիստավտո.ԱՄ | Հայաստան, ք.Երևան, Թևոսյան 1/10; +37477418488 | g.stepanyan@logist.am | 00150076 |
| 2 | Ա/Ձ Սարուխան Բրուտյան Մուշեղի | ք. Երևան, Նոր-Արեշ 15 փող. 7 շ., 12 բն; 093601909 | avto878787@mail.ru | 23162059 |
| 3 | «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ | Երևան, Բագրատունյաց 70/22; 033026355 | sag@krafthem.am | 02294699 |
| 4 | ԺԱԿ ԵՎ ԳՈՌ ՍՊԸ | ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն 19/40; +374 091 333 711 | saturn90@mail.ru | 03012667 |

2024 թվականի օգոստոսի 5-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/125 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

- **Լոգիստավտո.ԱՄ-ի** կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը փաստաթղթում ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ 1-ին չափաբաժնում Ընթացակարգի հրավերով պահանջվում է՝ «Հավաքածուն բաղկացած 4 կտորից (2 հատ աջ կողմի համար 2 հատ ձախ)։ 2012թ արտադրության Տոյոտա Պռադո մեքենայի համար։ Նույնականացման համարը՝ JTEBX3FJ20K099068։ Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի։», իսկ **Լոգիստավտո.ԱՄ-ի** կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը փաստաթղթում՝ «Հավաքածուն բաղկացած 4 կտորից (2 հատ աջ կողմի համար 2 հատ ձախ)։ 2012թ արտադրության Տոյոտա Պռադո մեքենայի համար։ Նույնականացման համարը՝ JTEBX3FJ20K099068։ Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր»։ 2-րդ չափաբաժնում Ընթացակարգի հրավերով պահանջվում է՝ «Հավաքածու բաղկացած 4 կտորից, նախատեսված է ավտոմեքենայի առջևի անիվների արգելակման համար յուրաքանչյուրի երկարությունը 9,5 սմ, լայնությունը 4,5։ 2015թ արտադրության Ռենո լոգան մեքենայի համար, շարժիչի ծավալը՝ 1.4լ, (հին մոդել)։ Նույնականացման համարը՝ X7LLSRB2HFH749254։ Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, բարձր կարգի։», իսկ **Լոգիստավտո.ԱՄ-ի** կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը փաստաթղթում՝ «Հավաքածու բաղկացած 4 կտորից, նախատեսված է ավտոմեքենայի առջևի անիվների արգելակման համար յուրաքանչյուրի երկարությունը 9,5 սմ, լայնությունը 4,5։ 2015թ արտադրության Ռենո

լոգան մեքենայի համար, շարժիչի ծավալը՝ 1.4լ, (հին մոդել): Նույնականացման համարը՝ X7LLSRB2HFH749254: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր:»:

- «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է Ընթացակարգի հրավերով սահմանված և պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը համաձայն Հավելված 1.3-ի:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2024 թվականի օգոստոսի 5-ին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/հ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | Լոգիստավտո.ԱՄ | 17000 | 14166.67 | 20% | 17000 | 14025 | 20% | 16830 | X |
| 1 | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | 17000 | 17000 | 0% | 17000 | 17000 | 0% | 17000 | |
| 2 | Լոգիստավտո.ԱՄ | 12000 | 10000 | 20% | 12000 | 9900 | 20% | 11880 | X |
| 2 | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | 12000 | 12000 | 0% | 12000 | 12000 | 0% | 12000 | |
| 3 | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | 250000 | 250000 | 0% | 250000 | 250000 | 0% | 250000 | X |
| 6 | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | 8000 | 8000 | 0% | 8000 | 8000 | 0% | 8000 | X |
| 7 | «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ | 44000 | 36650 | 20% | 43980 | 35700 | 20% | 42840 | X |
| 7 | ԺԱԿ ԵՎ ԳՈՌ ՍՊԸ | 44000 | 36650 | 20% | 43980 | 36650 | 20% | 43980 | |
| 8 | «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ | 88000 | 73200 | 20% | 87840 | 71900 | 20% | 86280 | X |
| 8 | Լոգիստավտո.ԱՄ | 88000 | 73333.33 | 20% | 87999.99 | 73333.33 | 20% | 87999.99 | |
| 8 | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | 88000 | 88000 | 0% | 88000 | 88000 | 0% | 88000 | |

08.08.2024թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և համակարգի միջոցով ծանուցելով առաջարկել շտկման ենթակա անհամապատասխանություններ արձանագրված մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

09.08.2024թ. Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակիցների կողմից սահմանված ժամկետներում համակարգի միջոցով ներկայացվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

12.08.2024թ-ին Հանձնաժողովը որոշեց.

3. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

4. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

5. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

6. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 3,6-րդ | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | բավարար |
| 7,8-րդ | «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ | բավարար |
| 1,2-րդ | Լոգիստավտո.ԱՄ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված Աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարությունների տեքստերը:

16.08.2024թ. Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարության տեքստերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում

վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Է. Ադումյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Մելքոնյան ____________

Կ. Կարապետյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ____________